



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 72

ՆՈՅ. 24/7 ԴԵԿՏ. 1912

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Տ Պ Ա Ր Ա Ն

”ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ”

Այսուհետեւ Կաթողիկէ Արձագանգը շարունակելով լոյս տեսնել տեղեւոր լիցեն տեղական տպագրութիւն մէջ: Տարբարանա՛, զոր բազմաթիւ գրեւորութեամբ կանգնեց Ամենայն Հոգեւոր Տէր, ըստ բաւականի ճոխ է և որ աւուր միշտ պիտի կանոնադրուի: Արձագանգը ի վիճակի է որ և ինչ տպագրութիւն գործող համար լիցէ ինչ Պոլիս և թէ գործունէրէ գիտնողները գոհացնելու:

Կարողութիւն ամէն տեսակ ծանուցանել, գիրքեր, տեսքեր, հրատարակութեան, փայտեր, փայտաշէններ, մանագրներ ևն., ևն.:

Գիները անմրցելի կերպով աժան են:

Ինչպէսզէրտական ճաշակի և տպագրական մեքլութեան կողմանէ ևս յաճախողները անտարակոյս գոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ «ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ»

Կ. Պոլիս, Բերս, 5 Պայրաւ փողոց 5:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի Պ Նոյ. 24/7 Դեկտ. 1912 Պ Թիւ 72

Ս. ԲԱՅԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՄԷԿ ՇՆՈՐՀՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ
ՆՈՐԻՆ ՍՐԲԱՋՆՈՒԹԵԱՆ

Վասիկանէն 28 Նոյեմբեր 1912

Թիւ 60780

Ամենապատիւ Տէր,

Ուրախութեամբ կը ծանուցանեմ Ձեր Ամենապ. Տէրութեան որ Սրբազան Հայրն բարեհաճութեամբ ընդունելով Ձեր մատուցած խնդրանքը, հաճեցաւ սիրայօժար յատկացնել իբր արտաքոյ կարգի նպաստ, նաեւ այս տարուան համար, յօգնութիւն Կաթողիկէ Արձագանգ թերթի, հինգ հազար (5000) Փրանքի դումարը, որ Ձեզ պիտի ղրկուի Կ. Պոլսոյ Առաքելական նուիրակ Գեր. Սարտիկ միջոցաւ, Լիոնի Տարածման Հաւատոյ բազմադիւն Ընկերութեան Կեդրոնական Ժողովքէն, որուն արդէն հարկ եղած հրամաններն տրուած են:

Այսու առթիւ Նորին Սրբութիւնը կը մաղթէ որ վերոյիշեալ Շաբաթներէն շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մա-

նաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարկաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու:

Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Միքաղան Հայրն սրբազին կ'օրհնէ յիշեալ Շաքաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները, մասնաւոր կերպով օրհնելով Ձեր Ամենապ. Տէրութիւնը, եւ միեւնոյն ժամանակ, Պատրիարքութեանդ եւ ամէն հաւացեալները:

Ի վերջոյ ամենաանկեղծ համարումի զգացումներով յօժարակամ սիրով մնամ

Ամենապատիւ Տեառնդ
Ճումարիս ծառայ
Ռ. ԿԱՐԴ. ՄԷՐԻ ՏԵՂ. ՎԱՆ.

Առ ամենապատիւ Տէր
Տ. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ
Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
Կ. Պոլիս

Յնձապիւն կը հրատարակեմք Մրազան Քահանայապետին մերոյ Պիոսի Ժ.Ի հայ Կաթողիկէիցս հանդէպ սաժած նշնադրապէս հայրական բարեգութ սիրոյն այս մէկ նոր ու մեծափառ ապացոյցը: Ինքն որ պատուական հիմնադիրն եղած է Կաթողիկէ Արձագանգ Շաքաթաթերթիս, եղած է միակզանայն անոր մեծ բարեւարը. եւ հիմա գրասիրաբար կը զիպակ մնայ այնպէս եւ շարունակել այդ մեծ բարեւարութիւնը: Թերքս ի բոլոր արեւ ճորհաւորելով Ամենապ. Հոգեւոր Տէրը այսպիսի մեծ շնորհի մը արժանանալուն համար, իր արագեղ շնորհակալիքները կը դնէ խնամարար յոսս Նորին Մրազանութեան Առաքելական Կաթողիցը: Այն Առաքելական Օրհնութիւնը զոր հայրաբար կը շնորհէ Մրազան Հայրը բերքիս եւ խմբագիրներուն, նոր ոյժ եւ կորով պիտի ազդէ բերքիս առաջին բիւռն իսկ իրեն զծած ուղղափառ եւ Հոռոմեական Ս. Եկեղեցւոյ անայրաջ հաւատարմութեան եւ հպատակութեան շաւղին մէջ յառաջդնելուն օր քան զօր եւ ամէն փութով ջանալու որ Մրազան Տեառն մերոյ մաղթած բարիքներն արդիւնաւորուին Կաթողիկէ Հայոցս մէջ, փրկարար առաքելութիւն մը կատարելով, ի բարգաւաճանս Կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգւոց: Այս Քահանայապետական օրհնութիւնը պիտի է քաջութիւն եւ իրաւունք մեզի ընթերցողները՝ որոնց մասնաւորապէս կը շնորհուի, որպէս զի իրենց օգտուելով հանդերձ, փոյր սակին մեծաւ եռանդեալք ծաւալելու Կ. Արձագանգը, անոր օգուտն ալ որչափ հնար է ընդհանրացնելու համար:

Եթէ մեր ջանքերն կարող ըլլան, հակառակ ամէն դժուարութեանց եւ խոչընդոտներու եւ վիշտերու «յազգէ եւ ի սուս եղբարց» ըստ բանից Առաքելոյն, փոխ իւրիք մեզի բերել այս վսեմ նպատակն ու պտուղները, զայս մեզի բացարձակ եղբակներուն պիտի համարինք:

Պատիւ եւ յարգանք մեր երիցս երանեալ Հօր եւ Հովնապետին, Բրիտոսի Փոխանորդին եւ Ս. Պետրոսի Յայրոջին, անսխալ Վարդապետին Ընդհանրական Ս. Եկեղեցւոյ, պերճափառ Քահանայապետին Պիոսի Ժ.Ի:

ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՓԱՀԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Զ

ԶՄԻՌՆԱՅԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԻԵԻ ԵՒ ԻՐԵՆԵՐՈՒՆ
ԽԱՆԳԱՎԱՌ ԳՈՐԾՈՒՆԷՌԹԻՒՆԸ

(Շար.)

Ինչպէս ծարաւը, քաղցը, արեան հոտը կը կատղեցնէ անտառներու վայրենի գիշատիչ եւ արիւնարբու գազանները, որք տիւ եւ գիշեր կը շրջին ի խնդիր անմեղ ոչխարի, կամ մուրեակ անցորդի ամայի լեռներու եւ անտառներու խորերը, ճամբու անցքերու վրայ, սովալլուկ եւ յուսահատ հրավառ բացած երկու արիւնալի աչքերը, բոցաշունչ ռնդունքը, կրճաելով, արելով գիշատիչ ակռաները, եւ անընդհատ կը գողան, կը մռնչեն, ճանկերովը մոլեգնաբար քերելով հողը, այսպէս ալ Տէր Կոմիտասին սուրբ արիւնը կը կատղեցնէր, կը մոլեգնէր հոգիները Յովհաննէս պատրիարքի եւ նորա արքանեակներու, որք անարգ ժպրհութիւնը ունեցան Պոլսոյ պէս մայրաքաղաքի մը մէջ 1707 Հոկտ. 21ին, երեքշաբթու գիշերի մութին՝ գործելու գժոխային այն ոճիւրը. (Տեղեկագր. Եղիազար Անկիւր. Ճէվահիրճի Մաղադ. Տ. Գրիգ. Նւզոկ.) :

Էջմիածնական Հայերը մինչեւ այն ատեն ընդդէմ Կաթողիկէից իրենց գործած վայրագութիւններէն իբրեւ թէ բաւականաչափ չգոհացած, անոնց վերջին հարուած մը եւս տալու եւ արմատաքի խլելու նպատակաւ Էջմիածնի Աղեքսանդր Կաթողիկոսէն ինչպեցին որ Զմիւռնացի Յովհաննէս վրդ. Կ. Պոլսոյ պատրիարք անուանուի. (տեղեկգ. Յակինդ. Բարիզ. առ Գօնթ Բօնթշարթէն, Թօգատց. Գրիգ. Մաղաք. Ճէվ. Եղիազ. Անկ.) : Սա 1707 Սեպտ. 5ին մայրաքաղաքս հասնելով, նոյն տարւոյ Հոկտ. 10ին (ըստ ոմանց Օգոստ. 25ին Պոլիս եկած, եւ Սեպտ. 25ին պատրիարք եղած է) չատ մը կաշառքով Ապուլչեխցի Սահակ վարդապետի ձեռքէն պատրիարքութիւնը ստացաւ. եւ Գումգաբուի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ ընափելով մինչեւ երեսուն օր ինքզինք աղուհաբար խռովութեանց խաղաղացուցիչ եւ հաշտարար կը ձեւացնէր, մինչեւ այն աստիճան որ նոյն իսկ իր քարոզներուն եւ ծանուցումներուն մէջ կ'ըսէր թէ «Հոգեւոր Տէր զինք զրկած է վրդովեալ ժողովուրդը հանդարտեցնելու համար» եւ այնպէսով միամիտ ժողովուրդը կը հաւատացնէր :

Եւ սակայն ինք էր բնութեամբ բուռն, փառասէր, ռիսակալ, յանդուգն, որուն համար դեսպան Ֆէրիոյ կ'ըսէ թէ «Աւետիքի զօրութիւն ոգին ունի», որուն փոխանորդ եղած էր, եւ սկսաւ իւր պատրիարքութիւնը իբրեւ պատուհաս Տեառն, իբրեւ մարմնացեալ սաղայել հեղլով չարութեան բոլոր թոյնը Կաթողիկէ Հայոց դէմ: Չէր խղճեր ամէնէն աւելի անիրաւ միջոցները ի գործ դնելու, անընդհատ զրպարտութիւնք, քսութիւնք, բռնութիւնք եւ հարստահարութիւնք կը նիւթէր անմեղներուն եւ տկարներուն դէմ: Ամսուան մը մէջ, ինչպէս կը վկայէ Ֆէրիոյ դեսպանը, Հայերը քառասուն քսակէ աւելի դրամ կերցուցին Դրան, միմիայն իրենց կամօր կատարել տալու համար, եւ պատրիարքութիւնը խաղաղիք մը դարձած էր ձեռքերնին, եւ քիչ ժամանակամիջոցին մէջ պատրիարքին մէկը կ'ելլէր միւսը կը նստէր, սակայն այս վերջինը ամէնուն մէջ չարութեան տեսակէտով առաջնութիւնը ստացաւ:

Ուստի արիւնարբու գազանը, բռնակալ ներոնը, կաթողիկէութեան ռիւերիմ թշնամին սկսաւ գործել իւր այս ահաբեկիչ արարքը, արբանեակ քահանաներով եւ աշխարհիկ լիբր անձինքներով: Եւ նախ եւ առաջ ուղղափառ աշխարհականներէն սկսելով, մէկը հրապարակէն, մէկը տան մէջ, ուրիշ մը կրպակին մէջ, մինչեւ քառասուն հոգւոյ չափ ձերբակալել տուաւ, եւ բանտերու մէջ նետուեցան: Բանտք ապիկար պատրիարքին յուշատետրին մէջ նշանակուած, եւ իրեն անյադ ձգտումներուն խղճնոտ ըլլալ նկատուող անձինք էին, եւ որոնք կրնային նաեւ իր վրայ ստուեր մը ձգել: Շատերն ալ աքսորք վտարուեցան: Այդ միջոցին բնական էր որ մայրաքաղաքին մէջ իրարանցում մը սկսաւ, երկու մը տիրեց Հայ Կաթողիկէ հասարակութեան մէջ, որովհետեւ հայ ազգին բնածին ցած մատնչութեան երեսէն նորադարձներէն շատերը ձեռք անցան. այսու հանգերձ Հայ Կաթողիկէները, որ մինչեւ այն ժամանակ գաղտնաբար կը շարունակէին յաճախել Հայոց եկեղեցիները, միանգամ ընդ միշտ զատուեցան եւ սկսան Լատին եկեղեցիներու դիմել. այս ո՛չ միայն լաւ տպաւորութիւն չըրաւ էջմիածնական հայոց վրայ, այլ մանաւանդ աւելի գրգռեց անոնց կատաղութիւնը:

Այդ դաժանութեանց գործուած ժամանակին Երանելի Տէր Կոմիտաս իր սովորութեան համաձայն օր մը իրեն խիստ բարեկամ եւ մտերիմ Կարապետ անուն Քահանայի մը տուն գնացած էր: Արդէն ստէպ կ'երթար հոն եւ հոգեւոր տեսակցութիւններով զիրար կը մխիթարէին քանզի այդ Քահանայն առաքինի եւ բաւականաչափ ուսեալ ծերունի մըն էր եւ իւր քարոզած վարդապետութեանց համար երեսուն տարի հաւածուելով հակառակորդներէն իր տան մէջ քաշուած, առանձնացած օրերը կ'անցունէր: Ուստի այն օրը պէտք եղաւ որ գլխէրը հոն անցունէ. եւ երբ հանդարտ կը ննջէր, երազին մէջ մարդ մը տեսաւ որ ձեռքը երկու պսակ ունէր, մին կարմրագոյն եւ միւսը սպիտակ. կարմիրը իրեն

գլուխը դրաւ, իսկ ճերմակը Տէր Կարապետին գլուխը՝ Տէր Կոմիտաս առաւօտուն պատմեց աեսած երազը, եւ Տէր Կարապետ սապէս մեկնեց, թէ կարմիր պսակը մարտիրոսութիւն կը նշանակէր։ Ուրիշ անգամ մ'ալ դարձեալ երազ տեսաւ թէ ինք՝ իւր գլուխը ձեռքին մէջ բռնած կ'անցնէր մայրաքաղաքին փողոցներէն։ Նոյն քահանան այս երազն ալ մեկնելով, Տէր Կոմիտաս աւելի հաստատուեցաւ իւր մտքին վրայ թէ յիշաւ իրեն մարտիրոսութեան պսակ կը պատրաստուի։ Եւ դեռ ասանց նման շատ տեսիլքներ տեսած էր։

Ներկայ պատմութեանս թուականէն վեց տարի առաջ Տէր Կոմիտաս Քահանայն ուխտի գնացած ըլլալով Նրուսաղէմ, հոն Զմիւռնացի Յովհաննէս վարդապետը ճանչցած էր։ Եւ այս ծանօթութիւնը իրեն համար ազիտարներ եղաւ։ Վասն զի իրեն բարի համբաւը, վարքին մաքրութիւնը, խիստ գնահատուած քարոզութիւնները, երգեցողութեան հրաշալիքը Նրուսաղիմայ մէջ կը խօսուէր, եւ նոյն իսկ ապագայ Պատրիարքը ասոր ականատես վկայ եղած էր, թէ՛ հոն եւ թէ՛ ի Կոստանդնուպոլիս փոխանորդութեան օրերուն, այս համբաւը իր սրտին խորերը չար նախանձու եւ ատելութեան ալիքներ դղողած էր՝ հարաւային ուռուցիկ հողմոյ նման որ ծովու խորերը թափանցելով անդգալապէս եւ խորամանկօրէն կը կատղեցնէ մարդակուլ ալիքները։ Եւ վեց տարիէ ի վեր կը փնտռէր յարմար առիթը՝ իրեն շանթերը թափելու այն անմեղ գլխուն՝ որ իբրեւ ջինջ հայելի իրեն զազիր դիմագիծները յստակ կերպով իրեն կը պարզէր։ Եւ ահա բաղձացուած առիթը յանկարծ ներկայացած էր. ամէն միջոց եւ իշխանութիւն իր ձեռքն էր, եւ ազատ էր գործելու։ Վերը պատմեցինք թէ բռնակալ պատրիարքը Զօրուլու Ալի բաշա եպարքոսին մօտ իւր որոճացած խորամանկ հնարքները իրագործելու համար ամէն բան դրամով եւ ուզած գոյներով նախապատրաստած էր։ Եւ յղացած դադափարին գլուխ գործոցն էր Տէր Կոմիտաս Քահանայն։

Այն օրերու մէջ կասկածելի եղողներէն գլխաւորն էր Տէր Կոմիտասը, որ պիտէր թէ ինչպիսի՛ անաղորոյն ոսոխի հետ էր իր գործը. եւ կը գուշակէր թէ սոյն սպառնալեաց փոթորիկը սլայթէր պիտի իր գլխուն վերեւ մանաւանդ զայս իմացնող դադափի գրութիւն մըն ալ ստացեր էր։ Այսո՞ւ հանդերձ պատրաստ էր նա արիարար ճակատամարտ ելլելու։ Դիտէր նա, եւ կը խորհէր թէ Ուղղափառ Ս. կրօնքը հաստատ արմատ մը ձգել կարենալու համար՝ իւր հողը պարարտացնող առատ արեան մը հեղման կը կարօտէր, եւ արիւնը ուրիշի մը չէր, այլ գլխաւորաբար իրենը։ Ուստի առանց այլայլելու գերբնական ճիգով մը կը պատրաստուէր։ Դիտէր միանգամայն թէ իրեն համար փախուստը շատ դիւրին էր եւ կրնար գիշեր ժամանակ ամենայն ապահովութեամբ ապաստանիլ Գաղղիական դեսպանատուն, սակայն աւելի Աստուծոյ կամացը կը համակերպէր եւ հաշտ սրտով կը սպասէր այն վայրկեանին որ իրեն նախասահմանուած էր վկայ հանդիսանալու Ս. Հաւատոյ։

(Շարունակելի)

ՄԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

ՓՐԿՁԻՆ ԱՋԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Ա. 1—17.—21 Հմմ. Ղուկ. Գ. 23—38)

(Շար.)

8. Աւետարանիչը երկրորդ չորեքտասանեակին մէջ ի բաց թողած է երեք թաղաւորներ, Յովրամէն վերջը, զՈքոզիա (Ի. Թագ. Ը. 24.), զՅովաա (ԺԱ. 2. 45.) և զԱմասիա (ԺԲ. 24.). քանզի ասոնք զաւակներն էին անօրէն Գովթոյիայի՝ որ կին էր Յովրամայ և դուստր Աքաաբու. այս ամպարչտին սպառնացաւ Աստուած Եղիայի. թէ պիտի ջնջէր նորա սերունդը մինչեւ ցշրորդդ ազգ (Ի. Թագ. ԻԱ. 24.): Ուստի այս երեք թաղաւորները Աստուծմէ դատապարտուած էին և իրաւունք չունեցան Քրիստոսի ազգահամարին մէջ մտնելու:

9. Երրորդ չորեքտասանեակի մէջ անուն մը կը պակսի, որով այն կը մնայ երեքտասան. Ս. Հմբք կ'ըսեն. 1. Յեքոնիա՝ որ որդի էր Յովսիայի (որ և Եղիակիմ նաեւ Յովակիմ), իր Յովակիմ անուն որդին անուանած էր նաեւ Յեքոնիա. և երեք ամիս թաղաւորէլէ յետոյ ի գերութիւն վարեալ ըլլալով ի Քաղաքատան, հայր և որդի միացուցուած են (Ս. Օդ. և ալք.): Հետեւաբար 44 և 42 համարներուն Յեքոնիաները հայր և որդի են. (Յ. Միաց, ԼԶ. 4—10.— Եզր. Ա. 34—45.— Երեմ. ԼԵ. 1.):— 2. Բաբելացւոց գերութեան ժամանակամիջոցն ալ իբրեւ ցեղ համարեալ է (Ոսկ. Ճ. Գ.):— 3. Օրինակողներու անուշադրութեամբ անուն մը ինկած է (Ս. Եպիփ.):

10. Ինչո՞ւ համար արդեօք Աւետարանիչը Յովսեփայ ազգահամարը կը հիշէ և ո՛չ Մարիամու... 1. Յովսեփ առ հասարակ Յիսուսի հայր կը կարծուէր (Ղուկաս Գ. 23.): ի սկզբան անդ Աստուած ուզեց անհաւատ ու խտապարանոց Հրէից ծածկել Քրիստոսի հրաշալի կուսածին ծնունդը, որպէս զի երանելի Կոյնն չբամբասուի կամ չպատժուի. վասն որոյ զՅիսուս կը կոչէին՝ որդի Յովսեփայ (Ղուկ. Գ. 22.):— 2. Հրէից սովորութիւն էր ծննդաբանութիւնը ալրերու յանգեցնել. և Մարիամ չունէր եղբայրներ, որով կը մնար միայն Յովսեփ, «այրն Մարեմայ»: Ուստի պէտք մըն էր այս եղանակաւ ազգաբանել. — 3. Վասն զի թէ՛ Յովսեփ և թէ՛ Մարիամ միեւնոյն ցեղէ են, մինչեւ իսկ գրեթէ ի նոյն ընտանեաց, ինչպէս կը պահանջէր նաեւ ամուսնութիւն կնքելու օրէնքն ալ. ուստի համազօր էր այս ազգահամարը:

11. Մատթէոս ուզելով ցուցնել զՔրիստոս խոսման զաւակ՝ ՄԵՍԻԱ, կ'երթայ մինչեւ ցԱբրահամ՝ ցհայրն նահապետաց և ազգաց, և հոն կանգ կ'առնու. ընդհակառակն Ղուկաս՝ մտադիր ըլլալով նորա Աստուածորդի ըլլալը ցոյց տալ, կ'երթայ մինչեւ ցնախահայրն Ադամ և կը յաւելու. «Որ Աստուծոյն». ուզելով նաեւ յիշել առաջին խոստումը. «Նա պիտի ջախջախէ բոլ զլուխդ» (Մնն. Գ. 15.— հմմ. Ա. Կոր.

ԺԵ. 47.), և թէ Քրիստոս ի յաւիտեանից սահմանուած էր, և գառն ղենեալ էր ի սկզբանէ աշխարհի (Հռ. Ա. 4.— Յայտ. ԺԳ. 8.)։— Հետեւաբար Մատթ. ունի 42 ցեղ, Յիսուսիւ հանդերձ. իսկ Ղուկաս՝ տանելով մինչեւ առ Աստուած, ունի 73 ցեղ։

12. Մատթէոս (համար 46) իբրեւ Յովսէփայ հայրն կը նշանակէ զՅակոբ, մինչդեռ Ղուկաս կը դնէ զՀէղի (Գ. 23.)։— Դժուարութիւնը անյաղթելի չէ. Հրէից քով սովորութիւն է որդեգրողը կամ աները, կամ մեռած եղբոր կնոջ հետ ամուսնացողն եւն. օրինական հայր համարել և անոր անուամբն ալ ազգաբանել։ Արդ Յակոբ և Հէղի օրինական եղբարք էին։ Միայն թէ Ս. Հարց ոմանք զՅակոբ և այլք հաւանակագոյն ևս զՀէղի կը դնեն բնական հայր Յովսէփայ, մին ամուսնացած ըլլալով, յետ մահու եղբորն, նորա որդեւայրիին հետ՝ և ծնած զՅովսէփ։ Շատերն ալ զՀէղի կը կարծեն Յովակիմ, հայրն Մարեմայ կուսի, կամ հայր Աննայի մօր Մարեմայ (*):

Այս եղանակը հարկ է յարմարցնել նաեւ միւս քանի մը անուններու. ինչպէս Սաղթիէլի որ կ'ըսուի որդի Յեքանեայ կամ Ներեայ (Մատթ. Ա. 42.— Ղուկ. Գ. 27.), ևն.։ Ոյր վասն և Ղուկաս ծնաւ չըսեր, հապա որ..., բնական և օրինական հայրութիւնը խառն դնելուն համար։

13. Նրկու ազգահամարներու տարբերութիւնն ալ աստի է. զի Մատթէոս Յակոբայ՝ իսկ Ղուկաս Հէղեայ նախնիքը կը թուարկէ. որ և ըստ ոմանց Մարիամու ազգաբանութիւնն է։— Բաց աստի միեւնոյն ժամանակամիջոցի մը համար Մատթէոսին նշանակած անձինքը թուով նուազագոյն են քան Ղուկասայ, որովհետեւ աւելի երկարակեաց էին. կամ ոմանք ի բաց թողուեր են այլեւայլ պատճառներով, ծնաւ բառն ըստ սովորութեան Հրէից ընդարձակօրէն առնուելով, մանաւանդ Նասսոնքէ վերջը մինչեւ Իսրայէլացեաց ելքն յԵգիպտոսէ, և ընդ մէջ Սաղմոնի և Դաւթայ։

Դիտելու է նաեւ որ Ասա վրիպանօք եղած է Ասայի (համար 8. հմմ. Գ. Թագ. ԺԵ. 8.)։— Նոյնպէս Սմովս բառը սխալ օրինակուած է. պիտի ըլլայ՝ Ամոն. (Հմմ. Գ. Թագ. ԻԱ. 48.)։— Արիւսգէն սկսելով (համար 43) մինչեւ Յովսէփ այլեւս անծննութ անձինքներ են, որք չեն նշանակուած հին կտակարանի մէջ։ Այն պահուն Քրիստոսի ցեղը՝ թէեւ արքայական, եղաւ սակայն խոնարհ և աղքատ, ինչպէս Ս. Յովսէփայ պարկեշտ վիճակն ալ զայն ցոյց կուտայ. Յեսեայ փառաւոր ծառն ճիւղամերկ եղած էր. բայց մերձ էր այն ըողբոյնելու արմատէն՝ նորածաղիկ Մեսիայիւ (Եսե. ԺԱ. 1)։ Ուստի անձերու այս շարունակութիւնը Ս. Մատթ. առած է Հրէից աւանդութենէն։

14. Աւետարանիչը Քրիստոսի ծննդաբանութիւնը բաժնեց երեք չարեհասանեակներու՝ խորհրդաւոր կերպով ակնարկելու համար Իսրայէլի ժողովրդեան երեք վիճակացը. 1. Դատաւորներու (աստուածպետութիւն), 2. Թագաւորներու (միապետութիւն), 3. Զօրավարաց և քահանաներու (ազնուապետութիւն)։ Երբ Աստուած տեսաւ որ միշտ աւելի կը չարանան, ան աստե՛ն զրկեց իր զաւակը. (Մատթ. ԻԱ. 33-37. Ղուկ. Ի. 9. ևն.)։

15. Մարիամու և Յովսէփայ տոհմերն ու ազգականք կը դատարարուին այսպէս. Մարիամու հայր՝ Յովակիմ (որ և Հէղի ի Ս. Ղուկ. ըստ բաղում Ս. Հարց), ունեցաւ հայր զՄատթէոս որ ուղղակի կ'իջնէ Դաւթիէն՝ անոր Նաթան որդւոյն մի-

(*) Դիտելի է որ Ղուկասու (Գ. 23.) մէջ ՈՐ ՅԱԿՈԲԱՅՆ բառը միայն հայերէնի մէջ կը գտնուի, անպատճառ ընդօրինակողի մը անորակելի համարձակութեան արդիւնք՝ նմանցնելու Մատթէոսի։

ջոցաւ, իսկ մայրն՝ Աննա, որոյ հայր Մատթան կ'իջնէ ուղղակի Դաւթէն՝ անոր որդին Սողոմոնի միջոցաւ. իսկ Յովսէփ որդի Յակոբայ որդւոյ Մատթանայ՝ նոյնպէս ի Դաւթէ, և կ'ըլլայ մօրեղբորորդի Մարիամու Կուսին. իսկ Եղիսաբեթ ևս է դուստր Սփրէի՝ դստեր Մատթանայ, որով կ'ըլլայ մօրաքեռ դուստր Մարիամու Կուսին և հօրաքեռ դուստր Յովսէփայ: Յոփսեփայ հայրն՝ Յակոբ, ուրիշ զաւակ ալ ունէր՝ Կղէովպաս (որ և Ալփէոս), որոյ կիներ կը կոչուէ (Յովհ. ԻԹ. 25) Մարիամ քոյր մօր Տեառն. այս Կղէովպասի զաւակներ էին Յակոբոս եղբայր Տեառն և Յուդա կամ Թագէոս, ինչպէս նաեւ Յովսէս կամ Յուստոս և Սիմոն (Մտթ. ԺԳ. 55. ԻԷ. 56. Մրկ. 2. 3.). և Սողոմէ աղջիկէն Թեառներն էին Մեծն Յակոբոս և Յովհ. Աւետար. որդիքն՝ որոսման:

Պ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

(Շարունակելի)

Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Մ Ե Մ Թ Ա Փ Օ Ր Ը

Տառնեակ հաղարներով եկեղեցականներ կը յաջորդեն ժողովուրդին խումբերուն, պճնուած սպիտակ շապիկներով, մանիշակագոյն թիկնոցակներով, կաթմիր գօտիներով, ոսկեճամուկ շուրջառներով՝ որոնք կարծես հիանալի հիւսուածոյ մը կը կաղմեն խումբերու տարազներուն հետ: Վեհօրէն, ծալ ի ծալ կը ծփան անոնց վերեւ Վիեննայի փառասուն ժողովրդապետութիւններու ուրոյն դրօշակները՝ թաւչեայ, ոսկեհուռ, նկարէն կամ ասեղնագործ:

Եւ ահա ուժգին կը զանգեն փողերու ձայնը՝ աւետելով մեծ վայելչութիւններու համախմբ: Հարիւրաւոր եպիսկոպոսներ թագը գլուխին եւ ոսկեշող գաւազանը ձեռքերնին կը յառաջանան ոսկեճամուկ շուրջառներով:

Փողերու երկրորդ հնչիւն մըն ալ կը թնդայնէ միգամած օդը. այս անգամ պալատական յիսուն կառքերն են որ ծայր կուտան: Ասոնց առջեւն կը քալեն ուղիցոյց սպասաւորները, ընդհանուր սպայակոյտը համակ ոսկեհուռ մետաքսահիւս համազգեստներով ու շքանշաններով պճնուած՝ եւ որոնց սէգ երկվարներուն առջեւն կ'ընթանան ծփուն կեղծամերով ժօֆէներ, պճղնաւոր զգեստներ հագած, զգեստներ՝ զօրս անցեալ մեծ դարերը միայն կրցած են հնարել, քաջահմուտ ըլլալով զգեստներու վեհութեան եւ անոնց ճոխ գեղեցկութեան:

Այնչէտ կալրագոյն, գորշ-շառատ, գորշ-մութ, գորշ-արծաթափայլ, շառագոյն եւ ամենազգի վառվռուն կամ երկարապոչ վիթխարի մարտիկ

ձիերէ լծուած՝ այն յիսուն կառքերը ներս կը մտնեն հոյակերտ դռնէն, երկու անգամ անոր շրջանը կ'ընեն ու կարգաւ կը կենան՝ պահիկէ մը դարձեալ պալատին ախոռները մտնելու համար, երբ թափօրը վերջանայ եւ թագաւոր-կայսրն անցնի արհիդուքսերու հետ միասին Ս. Հաղորդութեան կառքին ետեւէն:

Իւրաքանչիւր կարդինալ իր տրամադրութեան տակ ունի այն կառքերէն մին՝ զորս չորս կառավար միասին կը վարեն եւ որոնց կը հետեւին խումբ մը մանկլաւիկներ զեղին ու սեւ տարազներով, եւ որոնք տեսակ մը կենդանի փետրափունջերը կը կազմեն փառաւոր կառքին:

Ասոնցմէ վերջ կը տեսնուի ահա Մարիամ-Թերեզայի պատմական կառքը ոսկեշող պորփուրի գոյնով, լծուած ութ զոյգ առանց բժի սպիտակ երկվարներէ, փետուրներով, ծոպերով ասպազինուած, եւ որոնց վրայ հեծած են կայսերական գոյներով զգեստաւորուած սպասեակներ: Պատուիրակ կարդինալը՝ որու դիմաստուերը կ'ուրուագծուի կառքին մէջ քաշուած ձիւնաթոյր սնդուսին վրայ, հոն ձեռքերուն մէջ կը բռնէ սակեշող ճաճանչը, բաշխելով ամբողջ անցքին վրայ օրհնութիւնը բոլոր այն հոծ ժողովուրդին՝ որ ծունկի եկած է ցեխին ու լճացեալ ջուրերուն մէջ:

Այս բոլորէն ամպերուն մէջէն վեհերոտ կը տեսնուի արեգակը, կարծես աւետելու համար մերձենալը արդարութեան Արեգին. բայց շուտ մը կը թաքի դարձեալ կարծես նախանձի զդացումէ մղուած, զի, մինչ պահիկ մը առաջ այնքան անձկալիւ իր տեսոյն կ'ըզձար անձրեւին տակ սպասող ժողովուրդը, այժմ մէկ մը չի մոռձեր իր վրայ այլիւս, եւ ամէնքն ալ գետին ինկած են երկրպագելու հոգիներու աստուածային Արեգը:

Եւ ահա վիվա, էիլիէ'ճ. հօ'իւ եւ ամէն լեզուով կեցցե՛ներու ձայներ դուրս կը պոռթկան ամէն կուրծքերէ՝ ողջունելով երկրային վեհախառը: Փրանկիսկոս-Յովսէփի կայսրն ու դահաժառանգ արհիդուքս Ֆէրոլինանտ հրաշալի կառքի մը մէջ բազմած են: Սոյն կառքը թէեւ նուազ փառաւոր է քան Ս. Հաղորդութեան կառքը, բայց ճիշդ անոր նման լծուած է համակ ոսկիէ ասպազինուած ութ սպիտակ ձիերէ: Հեծելազօրու փողերը զինուորական բարեւ տալու նշանը կը հնչեցնեն անընդհատ. վաշտերը բարեւի կը կանգնին, ամբոխը կը շարժուի, եւ արեւը անգամ մըն ալ դուրս կը ցցէ իր գլուխը ամպերուն մէջէն, կարծես տաքցնել ուղէր վայրկեան մը այն հոգեկից ու զարմանալի ալեղարդ վեհապետը՝ որ Ս. Հաղորդութեան յաղթանակը կը կանգնէ:

Արհիդուքսերը, կայսերական ընտանիքը, հետեւորդները, կայսերական սպայակոյտը, կայսերական թիկնապահները կը յառաջնեն, կը շրջապատեն ու կը հետեւին Փրանկիսկոս-Յովսէփի կառքին, մինչ պալատան պատշգամներէն կը տեսնուին արհիդքսուհիներն ու պատուակալ տիկին-

ները, երջանիկ անոնք ալ, պատուելու իրենց վեհապետը, եւ երկրպա-
գելու Տիրոջ:

Ամբոխը կը հոսի խանդավառ, եւ նուազախումբերը կը շարունակեն
իրենց մեղեդիները մինչեւ ամէնէն հեռուները: Բազմութիւնը հոգեթով
կը պատմէ իրարու իր տեսածը ու երջանիկ է, լիուլի երջանիկ՝ հակա-
ռակ այս օրերու անընդհատ անձրեւային ըլլալուն:

(Շարունակելի)

ԱՆԱՉԱՌ ՏԵՍՈՒԹԻՒՆ (*)

(Շար.)

Երբ հակառակութիւնք շատնալ սկսան. սպառնալիք բազմանալ. եկեղեցական
վիճակն վտանգել, ածապարեց Աստուածային դիւցազն՝ չարաց առջեւն առնուլ, ազ-
գային ժողովոյն դիմեց անօգուտ եւ ազգակործան վեճերուն վերջ տալու: Ահե-
ղակոչ խռոն ի խուռն բազմութեան մէջ զայն ի գլուխ հանել կարելի չէր. յա-
նապատ տեղի խոյս տալ հարկ է աշակերտներով հանդերձ. դիմեց ի Հռովմ, հոն հայ-
կական աշխարհէ հեռու, բռնութենէ ազատ, սպառնալիքներէն՝ զերծ, խաղաղ առանձ-
նութեան մէջ ազգային անկեալ վիճակն հոգալու եւ աշխարհականացնող ծրագրին
տեղ, ուղիղ եւ օրինաւոր յօրինելու: Ահա երրորդ քրէական ոճիր. Հռովմ փախչիլ, թըշ-
նամեաց երկիր երթալ. Աստուծոյ սիրոյն համար ըլլայ քիչ մը հանդարտեցէ՛ք, գիտ-
ցէ՛ք ինչ կը խօսիք. թշնամին ո՞րն է. նախ դացած ատեն պատերազմ լսի չկար. երկ-
րորդ՝ թող ըլլար, ինչ յարաբերութիւն մեր եւ պատերազմին մէջ. կրօնական պետին
դիմած է. ո՛ւր մեր նախնիքն միշտ դիմած են Ղուսաւորէն ցալօօր, միշտ Քրիստոսի հիւ-
խանորդին դիմած անկէ լոյս եւ օգնութիւն ընդունելու: Միթէ Նաթողիկէ հաւատքն
չստիպէ՞ զիւրաքանչիւր ոք գլուխ ծռել Բազմայապետին առջեւ քանի որ եկեղեցա-
կան իրազօր իշխանութիւն անոր ձեռքն է. միթէ՞ հաւատոյ մաս չէ, եւ նոյն իսկ բա-
նական միտքն չպահանջէ՞ անհրաժեշտ յարաբերութիւն եւ կառարեալ միութիւն ան-
գամոց՝ գլխոյն հետ, իրենց գոյութիւնը պահելու համար. գլխոյն դիմելու Հռովմ եր-
թալու մէջ ինչ ոճիր կայ դուք Ձեզէն դաւանեցէ՛ք, ուղիղ դատ աւարեք, յիշելով պա-
տարանաւորութեան ահագին օրն:

Հռովմայ պրաւալի մէջ քաշուած չէր կրնար առանձին ազգային բեռն վեր-
ցնել. Միւնդոս գումարեց, երկպառակութեան շնորհիւ եւ թերահաւատութեան նպաս-
տիւք անթոռոց մեծամասնութիւնն պարագ էին: Ժամանակն նեղ է եւ պարագաներ
խիտ ստիպող. եւ ըստ շնորհալ սովորութեան՝ եւ ոչ ըստ իրաւանց, ժողովրդեան վկա-
յութիւն խնդիլ չէ հնարուել. ուստի Բազմայապետն մեծ իւր բացարձակ իշխա-
նութիւնն ի գործ դնելով ինն վիճակաւոր անուանեց եւ օծեց. ահա չորրորդ մահա-
պարտ մասնութեան յանցանք ըստ հակառակորդաց. սահմանադրական տէրութեան
մէջ կան դէպքեր որք թոյլ կուտան թագաւորին եւ իշխանին բացարձակ գործել եւ
եկեղեցական անկախ իշխանութեան կը զլացուի: Այս սուանձնաշնորհումն տրուած է

(*) Տես թիւ 70, էջ 669:

Հ. Կ. ազգին, արդեօք ե՞տ առնուեցաւ. ո՛չ երբեք. այս բացառութիւն մի էր. Եթէ իբր իրաւունք կը պահանջէք, բնէ՛ք ինծի այս իրաւունքը որմէ՞ արուեցաւ ձեզի. կամ Կ. հաւատոյ տեղեակ չէք և կամ կիրքերն այնչափ զօրացած են ձեր վրայ որ այլևս ուղիղ չուղիղէն չէք որոշեր. Աստուած ինքն ընտրած է միշտ իր մարգարէները և առաքեալները առանց ո՛ր և իցէ միջամտութեան. առաքեալներն սոյն շաւղին հետեւեցան և մատնիչ Յուդայի տեղ իրենք երկու ընտրեցին և աղօթք բրին և վիճակ արկին և ել վիճակն Մատթեայ, և ցայժմ և ցմիշտ Քահանայապետք սոյն կերպով կ'ընտրուին. միթէ հաւատքն Հ. Կ. հասարակութեան կրնա՞յ փոխուիլ և եթէ երբեքն շնորհումներ եղած են, վայել է անոնցմով զեղծանիլ. բնութեամբ ինն եպիսկոպոսներէն ո՞ր մէկն անյարմար է. և խօսքս Մէլեքիներուն ուղղելով կը հարցնեմ. ինչո՞ւ Ձեր եպիսկոպոսն չէք ընդունիր. սուրբ չէ՞, բարի վարքի տէր չէ՞, հակառակ հոգի ունի՞. ո՛չ. ա. մենեւին ո՛չ. ինչ բան կը պակսի իրեն, ա՞ր յանցանքին համար զայն կը մերժէք. ինչո՞ւ Եպիսկոպոսարանի դռներն անոր առջեւ կը դրոշմէք. չէ՞ք կարդացած սուրբ Աւետարանն և կամ ձեր ներկայ քահանաներ և նախորդ առաջնորդ և փոխանորդք չե՞ն յայտարարած ձեզի Քրիստոսի բերնէ. «Որ զձեզ անարգէ զիս անարգէ». քանի՞ դահեկան էք տուեր Եպիսկոպոսարանի շինութեան որ այսօր իր ձեր կը գրաւէք. դեռ կերտողին անուն կը կրէ և եթէ մենք ալ խռովարար հոգի ունենայինք, քանութեամբ դռները կոտորած ներս մտած էինք. Աստուծոյ հոգին չէ ի փոթորիկ, դուք քուէարկութիւն կը խնդրէք, աղէ՛ եկէ՛ք իրաւախոս ըլլանք իրարու հետ. ընդունող և չընդունողներու թիւ տեսանք. չուզողներն ուզողներուն կէան կ'սոյն, քառորդ, վեցերորդ մաս, ո՛չ բնա՛ւ ոչ. դուք ձեզնի տո՛ւք զիրան. արդարութիւն է հինգին իրաւունք առնուլ մէկուն տալ. կառավարութեան բաղկին ի՞րայ յենած ի՞րենց ամէն ինչ առաւթուր կը գործէք կը կոխէք. յիշեցէ՛ք զասացեալն Վի՛ յուսայք յիշեալնէ մի յորդիս մարդկան զի ո՛չ գոյ փրկութիւն ի նոսա»:

Արդ սիրելի եղբարք ի Քրիստոս. Հռովմ հաւատոց միութեան կեդրոն չճանչցողն միութիւն չսիրողն, հաւատոյ սկզբունքները չյարգողն ընական է Եկեղեցիէն բնաւ չճանցուի. «Ես ճանաչեմ զիման և ճանաչիմ յիմոցն» հետեւարար երեսփոխան ժողով եկեղեցւոյ մէջ տեղի չունի. Աստուած կարօտ չէ մարդկային խորհրդին. Սոյն հետեւութեամբ, Թերզեան եկեղեցւոյ հարազատ օրդի և օրինաւոր իշխանն, երեսփոխան բուռած ժողովն ժխտեց. Ահա հինգերորդ ազգակործան, բստ ոմանց, և պաշտօնէութեան արժանի եղեռնագործութիւն. անկուր բան, ժողովքէ կ'ընտրուի և կ'ուրանայ զայն. ինչ գեղեցիկ ասացուածք զոր ժողովն հակառակութեան մղենախանձութեան ոգւով այլ յայլմէ ելած կամ չկրցաւ և կամ չուզեց հասկնալ հաշւոյն չգաղուն. Թերզեան, որուն խօսքերն միշտ կշռուած, չքսեր՝ ժողով չեմ ընդունիր բնաւ. հապա, երեսփոխանական բուռածն, եկեղեցւոյ իխանութիւն գերի դարձնողն, Աստուածատուր իրաւունքներն յափշտակողն, կղերականութիւն ախարհականացնողն չընդունիր, և ոչ օրինաւորն, բստ Աստուածադիր կանոնաց իրաւախոսն. աչքախի ժողովներ միշտ եկեղեցւոյ մէջ գտնուեցան. արտաքին գործքերը տեսալու բնաց մէտ եկեղեցւոյ գլխաւոր իշխանութենէ կախում ունենալով. Հիմայ երեսփոխանաց ժողովին դառնանք. յարգո՞յ ժողով ինչ է ձեր պաշտօնն և զիտուան, ինչ բարի կ'ուզէք ընել և Թերզեան կ'արգելու, յեանեալ Հ. Կ. հասարակութիւնը պետական և քաղաքական տեսակէտներով յառաջացնելու պաշտօնով կը զբաղիք. Գա՛ջ եղէք, ողի՛ առէք, ոտք ելէ՛ք, մենք ամէնքս ձեր հետ ենք. մահ զմեզ չվախցնէ և ո՛չ բանտն կը վհաւեցնէ, բայց այդպիսի վեհ մտածմունքի տէրն Կաթողիկոսարանի մէջ ինչ կը դեպերի.

խարուած էք, տեղն հոս չէ. եղբայրութեան, հաւասարութեան և արդարութեան օստարով, սահմանադրական պետութեան նպատակ. օսմանեան դահլիճն և խորհրդարանն մեր առջեւ բաց են. հոն կրնանք մեր իրաւունքները քաջ պաշտպանել. եթէ ամէն օսմանեան ոք իրաւունք ունի հոն դիմելու և իւր անձնական իրաւունքները պաշտպանելու որչափ ևս առաւել հասարակութիւն մը որ երբեք իւր սկզբանց մէջ, անիրաւութեան, մատնութեան, անհաւատարմութեան, կեղծեանց ո՛չ իրողութիւններ և ո՛չ իսկ անունները կը գտնուին, հոս հայ Պօսուէին, Ճարտարաբանն Լամբրոնացի-առական յիշեցնելու եմ ձեզի, յարգոյ ժողով, Պատրիարքարանի սենեակներուն մէջ ժուռ գողով և օգ ծեծելով շահատակութիւն չլինի և յաղթութիւն ձեռք չբերուի, ՆԵՐՍԷՍ Վ. ԶՐԵԱՆ Հ. Կ. Ժ. Ի Բաղե

(Շարունակելի)

ՎԱՐՉԱԿԱՆ ԸՍՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՑ ՀԱԿԱԿԱԹՈՂԻԿԷ ՄԷԿ ԱՐԱՐԲԸ

Ս. Քահանայապետին կողմանէ ապօրինաւոր, հեճճուածող ու բանադրեալ հրատարակուած վարչական ըսուած ժողովոյն վճարուած օճկանն եզոզ ևւ ի հոգեւոր իշխանութիւնէ արգիլեալ թերթին մէջ հրատարակուեցաւ թէ Գր. էֆ. Ոսկեան Յունաց Պատրիարքին մահուան առթիւ համաձայնելով Ստեփ. Գարտաշեան էֆ. ի հետ, յանուն ժողովրդեան ևւ ժողովոյ Զէնէրի Պատրիարքարան պնացեր ևւ հոն ցաւակցութիւն յայտնելը է ևւ այցելունքու տուածին մէջ պաղղիւրէն լեզուաւ գրեր է հետեւեալը.

«Կաթողիկէ Հայոց Պատրիարքարանի վարչական ժողովն իւր խորին վշտակցութիւնը կը յայտնէ Յոյն ազգին այն դառն կորստեան համար զոր օւնեցաւ նա, յանձին Նորին Արքայութեան, Տ. Եովաքիմ Գ. ի, իւր Մեծ Պատրիարքին, և հայցելով հոգեւոյ Նորին հանգիստ յաւիտեանական, ի սրտէ կը մաղթէ արժանաւոր յաջորդ մը Ս. Զովհաննու Ոսկերեանի թափուր Աթոռոյն»:

Կաթողիկէ Արձագանգ իւր կոչման ու նուիրական պարտականութեան դրժած կ'ըլլար եթէ ի վեր չհանէր այս գրութեան հակախթողիկէ բովանդակութիւնը, որպէս զի թէ՛ տկարք լսելով չզայթակղին ևւ թէ՛ ճշմարիտ ուղղափառք տեսնեն ևւ համոզուին որ՝ շուրջ վեց ամիսներէ ի վեր Քրիստոսի Փոխանորդին՝ Հռոմայ Ս. Քահանայապետին անաստող ևւ հետող անձերը, հակառակ իրենց հաւատակուն թէ ճշմարիտ կաթողիկէացք են, ո՛րչափ հետի են կաթողիկէ սկզբունքներէ:

Մեր այս տողերը սակայն բնաւ դիտում չունին ևւ չեն կրնար ալ ունենալ մեր դրացի յոյն ազգին պատուոյ զգացումները վիրաւորելու. զի բաժանեալ ամէն հասարակութենէ աւելի գիտեն անոնք թէ ո՛րքան խղճմտորէն պէտք է յարգել կրօնային սկզբունքները ևւ արմատաքի խը-

լել անխտրականութիւնը . զիտեն նաեւ թէ յայտ մասին Կաթողիկէ Հռովմէական Ս . Եկեղեցին ո՛րչափ անտեղիտալի է եւ հետեւաբար մեծարելի : Նոյնպէս յայտնի է թէ մենք չենք կոնար ո՛չ Աստուծոյ անհուն գթութիւնը սահմանափակել կամ անոր ողորմութեան դաղտնեաց թափանցել , ինչպէս կ'ուսուցանէ Ս . Թովմաս , եւ ոչ բարի հաւասքի կարելիութիւնը ուրանալ . սակայն եւ ոչ կրնանք չեղիլ Քրիստոսի Տեառն մերոյ դատաստանէն որ ըսաւ . «Ով որ ինձի հետ չէ, ինձի հակառակ է , եւ ով որ ինձի հետ չժողովեւ, կը ցրուէ» . (Ղուկ . ԺԱ . 23) . եւ «Եթէ Եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր» (Մատթ . ԺԸ . 17) . եւ Կաթողիկէ վարդապետութիւն է թէ «Արտաթոյ Ուղղափառ Եկեղեցւոյ չի փրկութիւն» :

Արդ ՈՒՂԱՓԱՍՏ Եկեղեցին՝ Հռովմէականն է . եւ երկրորդ մը՝ չկը . նոր նոյնպէս ուղղափառ ըլլալ՝ անկէ բաժնուած ըլլալով եւ անոր հակառակ վարդապետութիւններով . քանզի ճեմարսութիւնը միայն մեկ հաս է , հետեւաբար եւ ճեմարիս ուղղափառ կրօնք եւ Եկեղեցին . «Հաւասարս Ի ՍԻ միայն... Եկեղեցի» . Կաթողիկէիցս միակ հաւատոյ դաւանութիւնն այս է , եւ առանց անոր ԱՆՀՆԱՐԻՆ է Կաթողիկէ ըլլալ կամ մնալ :

Արդ հիմա քննենք առ վայր մի վերոյիշեալ անորակելի գրութիւնը :

1 . Նախ ի՞նչ իրաւամբ ինքն աշխարհական մը եւ Ս . Քահանայապետէն բանադրուած եւ հերձուածող հրատարակուած ժողովոյ մը անդամ , կրնայ ներկայացնել Հայ Կաթողիկէ հասարակութիւնը եւ յանուն ժողովրդեան գործել կրօնական մեծ ապօրինութիւն մը . կը մերժէ զայս Հայ Կաթողիկէ ժողովուրդն ամբողջովին եւ խստիւ կը բողոքէ այս յանդգնութեան դէմ , քանզի նա կ'ուզէ բացարձակապէս Կաթողիկէ մնալ :

2 . Ո՛ր այն ուղղափառ սկզբունքն է որու համաձայն յանուն Կաթողիկէ ժողովրդեան կրցեր է նա գրել հոն հրապարակապէս եւ պաշտօնապէս՝ «հայցելով հոգւոյ նորին հանգիստ յաւիտեական» : Եթէ այս թէութիւններով հնար է Կաթողիկէիցս ազօթել — որ է հաղորդակցութիւն կատարեալ — այլ եւս ո՛ր կը մնայ տարբերութիւն ուղղափառ, հեռձեալ կամ հետեւիկոս Եկեղեցիներու . ուրեմն այս բառերը սին հրնչումներ են միայն . ահա այսպէս կ'ուզեն դարուս անարբերները , որոնք կրօնքի ընաւ կարեւորութիւն չեն տար , կամ ճշմարիտ Եկեղեցիէն հերձեալները :

3 . Ինչպէս կրնայ ըլլալ որ ճշմարիտ Կաթողիկէ մը կարենայ «ի սրտ մաղթել արժանաւոր յաջորդ մը Ս . Յովհաննու Ոսկեբերանի Աթոռոյն» : Ուրեմն կարելի՞ է եղեր Կաթողիկէի մը ընդունիլ թէ այժմեան յոյն պատրիարքական աթոռը , Ս . Յովհան Ոսկեբերանի Աթոռն է , եւ թէ անոր վրայ նստողը Ս . Յովհան Ոսկեբերանի յաջորդն է : Ո՛վ դարմանք .

աթոռ մը որ հերձեալ է Ս. Պետրոսի աթոռէն, որ կաթողիկէ եկեղեցւոյ հաւատոյ մասերէն մի քանին ուրանալով հերետիկոսութեան մէջ ալ ինկած է, Ս. Ոսկերերանի Աթոռն ըլլա՛յ... եւ կաթողիկէ մը զայս կա-
րենայ պաշտօնապէս դաւանել յոյն Պատրիարքարանի մէջ!!! Արդեօք Ս. Յովհանն՝ Ոսկերերան ալ հեկետիկոս էր... քա՛ւ լիցի, Տէ՛ր Աստուած.
Ս. Յովհանն Ոսկերերան բառին բուն նշանակութեամբ ուղղափառ էր,
եւ երբ զինքն յանիրաւի հալածեցին, նա բողոքեց առ Աթոռն Պետրոսի
առ Քահանայապետն Հռովմայ. այսքան փառապանծ Սուրբի մը յաջորդ
դաւանել Պետրոսի Աթոռն ուրացող եւ նախատող աթոռ մը!!... «Խնչ
նմանութիւն լուսոյ քնդ խաւարի»... Ուրեմն էջմիածնի աթոռն ալ Ս.
Գր. Լուսաւորչի աթոռն է եւ անոր վրայ նստողը Ս. Լուսաւորչի յա-
ջորդն է... ո՞րպիսի հաւատոյ դաւանութիւն է այդ, ի՞նչ տեսակ ուղ-
ղափառութիւն է այդ:

Երբ ըսուեցաւ, — եւ փաստացի ճշմարտութեամբ, — թէ յափըշ-
տակուած Ուսումնարանին մէջ անտարբերութիւն, անկրօնութիւն կ'ու-
սուցանեն, մերժեցին, կամ մերժել կարծեցին, երկու առաձգական բա-
ռերով... հիմա ի՞նչ պիտի ըսեն իրենց ուսումնական խորհրդոյն առեւ-
նապետին միջոցաւ ըրած այս պաշտօնական դաւանութեան որ չարա-
փառ է եւ ճշմարիտ Կաթողիկէութեան բոլորովին հակառակ... Աստ-
ուածաբանութիւնը կ'ըսէ թէ տարի մը շարունակ բանադրանքի մէջ ան-
հոգ մնացողը՝ հերետիկոսութեան կասկածին տակ կ'իյնայ... բայց դեռ
վե՛ց ամուսնան մէջ... «Խորհ խորոց կարգաւ»: Եւ դաւանարանական
մոլորութիւնը գործով ալ հաստատելու մտօք գնացին նաեւ մասնակցիլ
եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեանց: Պէտք էր հետևողական
ըլլալ. քանի որ կ'արհամարհեն Ս. Քահանայապետը եւ անոր վճիռները,
պէտք էր զադրէին կաթողիկէ միւս սկզբունքներն ալ յարգելէ: Ի՞նչո՞ւ
կ'ըսեն ուրեմն թէ Արդիական (Moderniste) հերետիկոսութիւնը մեր մէջ
մուտ չէ գտած: Համոզուեցէ՛ք անգամ մը որ Կաթողիկէ եկեղեցին
յաստուածայինս հաղորդակցութիւնը բացարձակապէս արգիլած է: (*)
Այս սկզբունքին եւ այս դաւանութեան համար է որ դարերով հալած-
ուեցան Կաթողիկէ Հայերը, մեր նախնիքը, եւ ոչ թէ Ս. եկեղեցիէն
դատապարտուած ազգայնական աղետալի անտարբերութեան ի նպաստ.
ահա ա՛յս Կաթողիկէութեան ամբողջութեան դաւանութիւնն է որ իր
պատուական արեւմտեւ կնքեց Երանելի Տ. Կոմիտաս Նահատակը, Գոնէ
խորհէին թէ նոյն ինքն յոյն եկեղեցին էջմիածնականներու պէս երկա-
կենցաղ եւ անտարբեր չէ, այլ խոտապահանջ կերպով անհանդուրժող եւ

(*) Ի նկատի առնելով հոգեւոր հաղորդակցութեան մասին ժամանակէ մը ի
վեր յառաջ եկած տարաձայնութիւնները. հարկ կը դատենք յառաջիկային այս հա-
ղորդակցութեան մասին Ս. Աթոռոյ տուած վճիռներէն զոմանս Արձագանցի մէջ
թարգմանաբար դնել:

արտաքսական (intolérant, exclusif) է։ Անիկա սինոդական որոշողութեամբ բացէ ի բաց մերժեց Հայոց առաջարկը զինուորներու մասին հոգեւոր հաղորդակցութեան, նկատելով զիրենք չարավառ։ Դիտելի է որ յուզարկաւորութեան ժամանակ հայ պատրիարքին հոգեւորապէս հաղորդակցութիւնը արգիլեցին։ Նոյն իսկ Պուլկար եկեղեցին սինոդական վրձիւ տուաւ՝ իր ՀԵՐԶՈՒԱԾՈՂ կոչած Հայոց հետ կրօնական որ եւ իցե հաղորդակցութիւն արգիլելով։ (Տես Արձապ. Ա. տարի, թիւ 7, էջ 81—82)։

Կը մնայ ուրեմն թէ՛ Ս. Քահանայապետէն իրաւամբ դատապարտուած, ապօրինաւոր եւ հերձուածող հոշակուած, բանադրուած, եւ Անոր գերագոյն իշխանութեան եւ Ուսուցման դէմ հետող եւ ըմբոստացող այդ վարչական ըսուած ժողովը կաթողիկէ չէ, այլ ինքնագլուխ, անխիղճ եւ անտարբեր ու կը խաբէ միամիտ հաւատացեալները։ Բռնութիւն մըն է—եւ կրօնական բռնութիւն մը—զոր կը գործէ յանդգնելով կաթողիկէ հասարակութիւնս վարելու ձեւեր առնուլ։ Ծշմարիտ կաթողիկէայք բարձրաձայն կը բողոքեն այս անորակելի բռնապետութեան դէմ որ կը ձգնի քայքայել կրօնքն ու հասարակութիւնը։

Ի վերջոյ կը կրկնենք որ ներկայ յօդուածին գլխաւոր նպատակը, ինչպէս վերը ըսինք, մեր կաթողիկէ հաւատացեալները ճշմարտութեան բացատրութեամբ իրենց հաւատքին մէջ հաստատել, եւ այն ճշմարտութեանց հակառակ գործուած արարքներուն չար ազդեցութենէն անարատ պահել։

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Աթուանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ արտաքին նորոգութիւնը, որ տեւեց շուրջ չորս ամիս, վերջերս աւարտեցաւ։ Ներկայ պարագաներու համար շատ մեծ համարուելիք զօհողութեամբ մը Ամենապ. եւ Գերբրջ. Հոգեւոր Տէրն ազատեց այս գեղեցիկ շէնքն մերձաւոր մեծ խանգարումէ մը որ տպաւնական էր, միեւնոյն ատեն ներքին դաւիթներուն, սրահներուն, եւ առ հոտարակ որմերուն գեղեցկութիւնն նոր փայլ մը առաւ։ Նոյնպէս ածման փաթողիկսարանը պատշաճօրէն նորոգուեցաւ, ինչպէս նաեւ կղերանոցի շէնքը զոր ըմբոստները յափշտակեցին։

✱ ✱ Լիմի նոր Արքեպ. Արհի. Հեկտոր Սրվէն գեղեցիկ եւ սրտապնտող նամակաւ մը պատասխանեց նորին Գերբրջանկութեան շնորհաւորականին։

✱ ✱ Սամաթիոյ Թաղականներէն ոմանք, հետեւելով Գեր. Ժողովրդապետ Մերժիմէքեան Անտոն Ա. ի յորդորներուն եւ հրամանին, յամառօրէն եւ ինքնագլուխ հնչեցուցեր են եկեղեցւոյն զանգակը երբ վախճանեալ յոյն պատրիարքին յուզարկաւոր Թափօրն կ'անցնէր այն փողոցէն — Նկատելով որ սկզբունքով կաթողիկէ Եկեղեցւոյ կանոններուն հակառակ եղող այս գործը, յերում կայ նաեւ օրինաւոր հոգեւոր

րական իշխանութեան դէմ՝ հետաուծիւն, կատարելապէս դատաւարանի է, գրուեցաւ Գեր. Ժողովր. Վ. ին թէ աշգրիտի յանցանքի մը կրկնուածի պարագային եկեղեցական կանոնաց տրամադրած պատիժներ պիտի տնօրինուին:

Մեծ ցաւով լսեցինք թէ յանկարծական մահուամբ առ Տէր փոխուած է Գեր. Յովհաննէս Ծ. Վ. Բօլաթեան եպի. փոխանորդ Անկիւրիոյ Գողարկաւորութիւնը կատարողած է հանդիսաւորապէս, ընկերակցութեամբ խնամքով աջ բազմութեան հաւատացեալներու. Գեր. Յովս. Ծ. Վ. Պահպանեան խօսք է դամբանականը. եւ թաղումը կատարուել է Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյն փակին մէջ: — Լուսահոգին ծնած էր ի 1836, և իր ծննդավայրն եղող Անկիւրիոյ Կղերանոցին մէջ առաջին ուսմունքն առնելէն վերջը, զրկուեցաւ ի Սէն Սիւրբի Բարիգու և ի 1880 քահանայ ձեռնադրուեցաւ երջանկայիշատակ Ազարեան Պատրիարքէն: Առաքելութիւններ կատարած է ի Տ. Կերտ և ի Մուշ. Կ. Պոլսոյ կղերանոցին մեծաւոր եղած է վեց տարի. յետոյ մեկնելով յԱնկիւրիա՝ Առաքելոց եկեղեցւոյն ժողովրդապետութիւնը վարած է վեց տարի, հուսկ ապա լուսահոգի Ղաղարոսեան եպ. փոխանորդ ապա նոյն աթոռոյ տեղակալ կարգուած է. և անցեալ տարի Արհի. Գր. եպ. Պահպանեանէ հաստատուած էր փոխանորդի պաշտօնին մէջ: Հանգուցեալը ծանրաբարոյ էր և կարգաւոր աշխատասէր մը, յոյժ նախանձախնդիր Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ սկզբունքներուն պաշտպանութեան:

Հանգիստ կը մաղթենք իր հոգւոյն և միեմարութիւն իր կրտսեր եղբոր՝ Գեր. Յովսէփ Վ. Բօլաթեանի:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Անցեալ Դշ օրը, զինադագարի բրթողովը Պախշայիշ գիւղի մէջ ստորագրուեցաւ Պուլկար պատուիրակներէն՝ նաեւ յանուն Սերպիոյ և Գարատաղի. բայց Յունաւորան մերժեց ստորագրել այլեւայլ պատճառանքներով. այլեւս յայտնի կը տեսնուի որ զինակիցներն իրարու մէջ սկսած են դժտուիլ՝ աւարի բաշխումի մասին: Ի նկատի առնով նաեւ Աւստրիոյ և Ռուսիոյ հակառակասէր ընթացքը, գործին վախճանը ամպամած հորիզոն մը ցոյց կուտայ. Աստուած արգելու ահաւոր արեւնահեղութիւններ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. Քահանայապետին մէկ շնորհք	689
Տէր. Կովստա Քահանայ	691
Աւետարանի մեկնութիւն	694
Ս. Հաղորդ. Համագգ. Համաժողով ի Վիեննա	696
Անաչառ տեսութիւն	698
Վարչական ըսուած ժողովոյ հակակաթողիկէ մէկ արարք	700
Տեղեկագրական	703

ԱՐՏՈՂԱՏԷՐ

ՅՈՎ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԴԵՆ-ԽՄԱՐԱԴԱՂԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՄԱՇԵԱՆ

Տպագր. Արձագանգ Զաքարեայի, Տերա, Պայրամ փողոց քիւ 5 Կ. Պոլիս

Թերթիս երկրորդ, արիւն պիտի աւարտի յանապիկայ Դեկտեմբեր 31ին, ու երրորդ արտոյն պիտի թեւակոխէ 1913 Յունուար 1ին, աւելի խնամեալած եւ աւելի նոյն բովանդակութեամբ:

Բաժանորդութեան պայմաններն անփոփոխ կը մնան. հետեւապէս կը նշուի իրենց փոփոխութիւնները՝ որ փութան բաժանորդ գրուիլ մինչեւ 31 Յունուար: Իսկ անոնք որ արդէն գրուած են, իրենց պայմանաժամը չլրացած կը պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնը:

Պատեհ առիթ կը ներկայանայ մեզ հրապարակաւ յայտնելու մեր խորին շնորհակալութիւնս մէկն այն բարեացակամ անձերու, որոնք այս արուեստ երջանին մէջ հանեցան գրաւոր թէ բերանացի թերթիս նկատմամբ իրենց դուրասալից գոհունակութիւններն, խնդակցութիւնը եւ նոյնին շարունակութեան համար խրախոյս եւ մաղթանքներ յայտնել: Կը վստահացնենք զիրենք որ բնաւ պիտի չմտնայուին եւ իցէ գոհողութիւն՝ այս գերազանցապէս լուրջ եւ հաստատ կարողիկէ սկզբունքներու ծառայող թերթս միշտ աւելի օգտակար ընծայելու մեր սիրելի հասարակութեան: Կը խնդրուի փոխադարձաբար մէկ մի նշանաբան կարողիկէ անհատէ իւրովսանն աշխատիլ *Արձագանքի* ծառայութիւն:

Հրատարակուեցաւ «Տարրական սկզբունք Բրիտանական Վարդապետութեան, փոփոխելի տնայնացի համար, հաստատելու Հոգեւոր Իշխանութեան եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Վարդապետ հասարակութեանս ամեն զարդներուն մէջ»: Կցուած են աւտօրէայ հարկաւոր աղօթքները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան լուրջ սեղանաբար եւ պարզ ոնոյն շնորհիւ դարձեալ անհատներու ամենեւնի օգտակար եւ յանձնարարելի գրքոյկ մըն է անհրաժեշտ:

Դիմել անհամեմատ կերպով ածան է. ամուր բողոքական 2 դահեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց թիւ 5:

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բնակչոյ համար	Տարեկան	Դրամ	40
Վեցամսեայ	»	»	20
Մի ամիսեայ	»	»	10
Վեցամսեայ	»	»	5

Բաժանորդագրութիւնը կանխիկ կը վճարուի մէկ անգամ
և կամ մէկ մէկ զտուօց, նամակաւորութեամբ

Մէկ թիւ 1 Դաշնակցական

Նամակ, յօդուած եւն. կը դրուի ինքնազգրութեան հասցեին

ՀԱՐՈՂԻԿԻ ԱՐԶԱԿԱՆԿ

Բերս, Պոլսոյ փողոց. թիւ 5

Կ. Պոլս

KATOGHIGHE ARZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

- ԾԱՆՈԹ.—
- 1.— Աւագանց կը նմանաւորի Շաքար օրերը:
 - 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնա-
բանք նմանաւորել իրեն դրուած ո եւ է յօդուած:
 - 3.— Կեդանունով դրուած յօդուածներու հետեւեալ կը պարտի
իր իսկական անունը ծանուցանել Խմբագրութեան:
 - 4.— Չեղանկներ եւ չեն դարձուիր:
 - 5.— Յօդուածներու ձեւագիրները պէտք է գրուած լրջան թուորին
մէկ կողմը միայն:
 - 6.— Ծանուցանց համար մասնաւոր պայմանագրութեան կը կա-
սարուի:
 - 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու
դաշնակցանի նամակաւորութեամբ ի միմեկին դիմել: